

Կ Ա Ր Գ

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ
ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՏՐՎԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են բնակարանային ֆոնդի՝ բազմաբնակարան շենքերի և անհատական բնակելի տների (այսուհետ՝ բնակֆոնդ) տեխնիկական վիճակի հետազննությունների անցկացման և հետազննության արդյունքում տրված եզրակացությունների վարման հետ կապված հարցերը:

2. Բնակֆոնդի տեխնիկական վիճակի գնահատումն իրականացվում է տեխնիկական վիճակի հետազննությունների միջոցով, որոնք անցկացվում են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 274-Ն որոշմամբ նախատեսված ընթացակարգով.

2) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից հաստատված՝ շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումների համաձայն:

3. Բնակֆոնդի տեխնիկական վիճակի հետազննությունը պատվիրվում է՝

1) բազմաբնակարան շենքերի համար՝ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից, իսկ կառավարման մարմնի բացակայության դեպքում՝ համայնքի կողմից.

2) անհատական բնակելի տների համար՝ դրանց սեփականատերերի կողմից, իսկ սեփականության իրավունք գրանցված չլինելու դեպքում՝ դրանց նկատմամբ իրավահաստատող փաստաթղթեր ունեցող անձանց կողմից:

4. Բնակֆոնդի տեխնիկական վիճակի հետազննությունն իրականացվում է՝

1) բազմաբնակարան շենքերի համար՝ շենքի շինությունների (բնակարանների և ոչ բնակելի տարածքների) սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի շրջանակներում կատարված անկանխիկ վճարների հաշվին.

2) անհատական բնակելի տների համար՝ սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված անձանց միջոցների հաշվին:

5. Բնակֆոնդի տեխնիկական վիճակի գնահատումը ցուցվում է իրականացնել ոչ ուշ, քան նախորդ հետազննության անցկացումից, իսկ նոր կառուցված բազմաբնակարան շենքի կամ անհատական բնակելի տան համար՝ կառուցումից հետո 10 տարին մեկ անգամ:

6. Անկախ սույն որոշման 5-րդ կետում նշված ժամկետից՝ բնակֆոնդի տեխնիկական վիճակի գնահատումը ցուցվում է իրականացնել ավելի վաղ՝

1) բազմաբնակարան շենքի կամ անհատական բնակելի տան վերակառուցման ժամանակ.

2) բազմաբնակարան շենքի կամ անհատական բնակելի տան գործառնական նշանակության փոփոխության (բացառությամբ շինարարության կամ քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) ժամանակ.

3) բազմաբնակարան շենքի կամ անհատական բնակելի տան շահագործման պայմանների փոփոխության՝ բեռնվածքների մեծացման ժամանակ.

4) բնական կամ տեխնածին աղետների, հիմնատակի գրունտների անհավասարաչափ նստվածքների և այլ ազդեցությունների հետևանքով շենքերի կոնստրուկցիաներում վնասվածքներ հայտնաբերվելու դեպքում.

5) տեխնիկական վիճակի նախորդ հետազննության արդյունքում տրված եզրակացությամբ նոր հետազննության անցկացման համար առավել վաղ ժամկետ սահմանվելու դեպքում.

6) սույն կարգի 3-րդ կետում նշված մարմինների և անձանց նախաձեռնությամբ:

7. Բնակֆոնդի տեխնիկական վիճակի հետազննության արդյունքում կազմված եզրակացությունների պատճենները և էլեկտրոնային տարբերակները՝ «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 6-րդ կետի համաձայն շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են լիազոր մարմին՝ շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության գործունեության մասին լիազոր մարմին ներկայացվող հաշվետվության հետ միասին:

8. Սույն կարգի 7-րդ կետում նշված եզրակացությունների մեկական պատճեն տրամադրվում է նաև՝

1) բազմաբնակարան շենքերի դեպքում՝ շենքի կառավարման մարմին՝ միաժամանակ տեղեկացնելով նաև համայնքի ղեկավարին.

2) անհատական բնակելի տների դեպքում՝ սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված անձանց՝ միաժամանակ տեղեկացնելով նաև համայնքի ղեկավարին:

9. Սույն կարգի 7-րդ կետում նշված եզրակացությունների հիման վրա լիազոր մարմինը վարում է էլեկտրոնային մատյան՝ բազմաբնակարան շենքերի մասով՝ N 1 ձևին և անհատական բնակելի տների մասով՝ N 2 ձևին համապատասխան, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկատվական համակարգ ստեղծվելուց հետո՝ այդ հարթակի միջոցով, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ժամկետներում և ձևաչափով:

10. Լիազոր մարմնի կողմից NN 1 և 2 ձևերին համապատասխան մատյանում տվյալները լրացվում կամ արդեն լրացված տվյալները փոփոխվում են սույն կարգի 7-րդ կետում նշված հաշվետվությունները ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Սույն հավելվածի 10-րդ կետի համաձայն լրացված մատյանները՝ սույն հավելվածի 10-րդ կետում նշված ժամկետի ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, լիազոր մարմինը՝

1) հրապարակում է իր պաշտոնական կայքում.

2) տրամադրում է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեին՝ դրանում արտացոլված տվյալներին ազգային գեոպորտալի միջոցով հանրային հասանելիություն ապահովելու, ինչպես նաև այդ տվյալները համապատասխան գրառումների տեսքով պետական գրանցման էլեկտրոնային մատյանում ներառելու նպատակով:

ՄԱՏՅԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՏՐՎԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Հասցեն	Կադաստրային ծածկագիրը	Կառուցման տարեթիվը	Ընդհանուր մակերեսը	Հարկայնու- թյունը (այդ թվում՝ վերգետնյա և ստորգետնյա հարկերի թիվը)	Վերջին վերանորոգման կամ հիմնանորոգման կամ վերակառուցման տարեթիվը	Շենքի՝ պատմամշակութային հուշարձան հանդիսանալու մասին տեղեկություն	Շենքի տեխնիկական վիճակի հետազննության		
								իրականացնողը	օր, ամիս, տարի	արդյունքում տրված եզրակացության համաձայն շենքի վնասվածության աստիճանը
1.										
2.										
3.										
...										

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ